

մը՝ գիրքին 894 էջին վրայ, մնացորդաց մարդահամարին ներքե հրուսած սա եռասուղիւն տակ, «Աֆո՛թ թարգարարներուն, պատի՛ւ հայ վերապրումի ճիգին ու մանասնոգ անելու և բազմանալու առողջ բնազդին»:

Մասնախոսաբանի մը սահմանները թոյլատու էն են աւելի ընդարձակ եւ մանրադատում վերլուծում մը, որուն սակայն ո՛ր միայն ընդունակ այլ և արժանի է բազմաթիւ աշխատակիցներու օգնութեամբ պատրաստուած, 260 է աւելի լուսատիպ պատկերներով զարգարուած, մտածուած դասաւորութեամբ համակարգուած, գեղեցիկ տպագրութեամբ ի լոյս ընծայուած այս ընտիր գործը, որ ինքնին իսկ կը յանձնարարէ ինքզինքը ոչ միայն ամէն Մարաշահայի այլ նաեւ ոչ Մարաշահայերուն, այսինքն ամէնուս:

Յ. Ե. Գ.

— — —

Ս. ՅԱՎՈՐԻ ՆԵՐՍԵՆ

ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

Անցեալ փետրուար ամսուան ընթացքին, Ս. Աթոռոյս ՅԹՐԷԹ Ժողովը եօթն անգամներ ինիստ դուստրուեցաւ իրիւ վարչական Մարմին, իսկ իբրեւ ԼԵՐՈՍԿԱՆ Գերագոյն Ասեմն՝ մէկ անգամ, իւր քանչիւրը զբաղելով իր իրաւասութեան մէջ եղած խնդիրներով:

Քշ. 4 Մարտ. — Ժառ. Վարժարանի և Ընծայարանի աշակերտք, իրենց տեսչին և ուսուցչիներուն առաջնորդութեամբ, գացին Երիթով, Յորվանան գետ, և Մեռեայ ծով, ամրողջ օրերն այն տալով տարեկան այդ պտոյտին, Կրօնական պաշտամունք կատարեցին Յորդանանի ափին, լողանք ըրին Մեռեայ ծովու մէջ, ճայցնին Երիթով, և վերելք կատարեցին դէպի Փորձութեան Լեռը:

— Ս. Պատրիարքը և, Ս. Մեքսոյ Սրբազանի, Տ. Եղիշէ Վրդի և Պ. Կ. Նուբեանի ընկերակցութեամբ, անցաւ Յորդանանի միւս ափը, ուր հիւրընկալուեցաւ Պ. Ս. Անթիքճեանի ձեռմբոց տաղաւարին մէջ:

Պշ. 6 Մարտ. — Երեկոյեան հանդիսաւոր նախաստակ Սրբոց Վարդանանց. Հեթումի արքայատան մականը ի տես հանուեցաւ ըստ սովորութեան:

Սշ. 7 Մարտ. — Ըստ սովորութեան, Ս. Վարդանանց տօնին այս օր պատարագեց դըպրանոցին տեսչը, Տ. Տրբան Վրդ., որ և քարոզեց օրուան տօնին առթիւ, արգային այս պատերազմին հոգեւոր նշանակութեան մէջ մասն

նանշելով անոր բուն արժէքը, իբր սուրբ խնայելի մը պաշտպանութեան գործը, որ՝ պարտութեան երկ ոյթին տակ՝ հշմարաւ յաղթանակին մը եղաւ:

— Կէս օրէն վերջ, Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ աւագ թարգման Տ. Հայրիկ Վրդի և գիւսեանի տղայ Պ. Կ. Նուբեանի այցիկեց Ձիսոս պաշտոնի հիւսիսպատասանը, ի շնորհաւորութիւն իրենց ազգային տօնին:

Ուր. 8 Մարտ. — Ըստ իրաւական սովորութեան, Ս. Պատարագը մասուցուեցաւ Ասորւոց մատրան մէջ, ուր քարոզեց Տ. Գէորգ Վրդ., որ նախըթանաբար քարոզած էր նաեւ ի Ս. Աստուածածին. նիւթ առնելով օրուան ընթերցուածներէն, ազգու յորդորներ տուաւ մերձակայ պաշտոն առթիւ աղաշխարութեան և քրիստոնէական բարի կենաց համար:

— Կէս օրէն վերջ Ս. Պատրիարքը, Տ. Մեքսոյ Սրբազանի, Տ. Սինն և Տ. Տրբան Վարդապետներու և Պ. Կ. Նուբեանի և հարտարապետ Պ. Յայլէթանի հետ Երիթով գնաց, Յորդանանի ափին, միւս ազգաց մատուռներու շարքին կանուցանելի հայկական մատուռի մը մասին տեղւոյն վրայ քննութիւն մը կատարելու համար:

Շր. 9 Մարտ. — Երեկոյեան Ժամերգութեան ատեն կատարուեցաւ ճփակել խորանի ծէսը, բոլոր խորանները և սեղանները վարագուրուեցան՝ ի խորհուրդ նախածնողաց արտաքսման դրախտէն:

— Ժառանգաւորաց վարժարանի մեն սրահին մէջ կատարուեցաւ դպրոցական հանդէս՝ նուիրում Ս. Վարդանանց յիշատակին. թանախսեց Տ. Զգոն Վրդ. ճառեր կարդացին Յարութիւն Սրկ. և Ժառանգաւոր Թորոս, արտասանութիւններ եղան:

Վր. 10 Մարտ. — Ըստ Հին Տոմարի Բուն Բարեկենդանի առթիւ Ս. Պատրիարքը քարոզեց, օրուան ընթերցուածներէն ներշնչուած խրատական խօսքեր ուղղելով ամէնուն:

— Երեկոյեան, ընդհանուր ռեզիանտան մէջ ընթերցին միաբանք և աշակերտք. մաղթանքի խօսքեր եղան Ս. Պատրիարքին կողմէ նուիրում պիտական Աթոռներու, Հայ Ժողովուրդին եւ Միաբանութեան և Պատր. Փոխանորդ Տ. Մկրտիչ Սրբազանի կողմէ՝ Ս. Պատրիարքին համար:

Քշ. 11 Մարտ. — Առաւօտեան Ժամերգութեան վերջ, միաբանութիւնը, աշակերտք և պաշտօնեայ Պատրիարքարանի մեն սրահին մէջ ներկայացան Ս. Պատրիարքին, բարի պահելի շնորհաւորութեան համար:

— Տ. Գարեգին Վրդ., Հայֆայի Հոգեւոր Հովիւր Ս. Աթոռ եկաւ, գործոց կարգադրութեան համար:

Պշ. 13 Մարտ. — Կատարուեցաւ արարողութիւնը հանդիսաւոր ճշմարիտքի՝ զոր և հրապարակային «Մեղա» ն արտասանեց Ս. Պատրիարքը:

● ԵՂ. 14 Մարտ. — Տ. Գարեգին Վրդ. մեկնեցան իր պաշտօնատեղին:

— Տ. Սիոն Վրդ. Տ. Միւռնի Արք. և Գ. Կ. Նուբեան երեքով գացին արթուպատկան պարտէզին գործոց քննութիւն:

— Երեկոյեան՝ հանգիստաւ բեկեցեցն. քարոզեց Ս. Պատրիարք Հայրը. բացատրեց աղօթքին կարեւորութիւնը, ցոյց տալով թէ անձին տկարութեան զգացումէն անդհուած հոգին աւելորդ միջոցաւ ամենէն աւելի կրնայ գտնել իր խաղաղութիւնը:

● Ուր. 15 Մարտ. — Լուսարարապետ Տ. Մեսրոպ Սրբազան, յանուան Ս. Պատրիարքին, Պայքարմի առթիւ շնորհաւորական այցելութիւն տուաւ իսլամաց Միւսթիֆէ ֆէէնտիին և երեւելիներուն:

● Եր. 16 Մարտ. — Օրուան պոսին առթիւ, երէկ իրիկուն նախատեսակ և այսօր ժամերգութիւն և Ս. Պատարաք մատուցուեցաւ Ս. Թորոս պատմական մատուռին մէջ:

— Նիւ Եւրքի եպիսկոպոսական Աստուածաբանական համալսարանի ուսուցիչներէն Վեր. Հասլըրտ Ռուպրիտ, ընկերակցութեամբ Կանոնիկոս Պրիմմէնի. այցելեց Ս. Պատրիարք Հօր:

— Երեկոյեան, Միաբանութիւնը Հրաշափառի թափօրով մուտք գործեց ի Ս. Գարուսթիւն, հանդիսապետութեամբ Լուսարարապետ Տ. Մեսրոպ Սրբազանի:

● Կիր. 17 Մարտ. — Ժամերգութիւն և Ս. Պատարաք տեղի ունեցան Ս. Գարուսթիան տաճարի մեր լիւրնայարկ մատուռին մէջ. իսկ Ս. Պատարաքէն լիւրջ Ս. Գերեզմանին շուրջ կատարուեցաւ երբեքարծ հանգիստաւոր թափօր, գլխաւորութեամբ Լուսարարապետ Տ. Մեսրոպ Սրբազանի:

● Դշ. 20 Մարտ. — Ճաշու ժամերգութեան միջոցին Տ. Մկրտիչ Սրբազան Աղաւնունի քարոզեց կանանց դասուն, բարեգործութիւնը բարեպաշտութեան լծորդելու կարեւորութեան մասին:

● ԵՂ. 21 Մարտ. — Երեկոյեան, բեկեցեցնի միջոցին Ս. Պատրիարքը քարոզեց. բացատրեց թէ ապաշխարութեան խորհուրդը անկեղծօրէն պաշտաւած հոգիին վրայ միայն կրնայ արդիւնաւորուիլ, ու այդ կերպով է միայն որ մեղքէն խուսափած հոգին կրնայ հանգաւորիլ:

● Ուր. 22 Մարտ. — Ս. Պատրիարք Հօր այցելեց Լէտի Ունէլթըր սըր Կրիմսթըն, Երուսա-

ղէմի նախկին կառավարիչ Սըր Ռ. Սթոքսի դարձուին, որ Լոնտոնէն էր եկած:

● Եր. 23 Մարտ. — Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ Տ. Մեսրոպ Սրբազանի, Տ. Սիոն Վրդ. և Տ. Միւռնի արեւայի, մեկնեցաւ Հայֆա, տարեկան հովուական այցելութեան համար:

● Կիր. 24 Մարտ. — Ըստ սովորութեան, Ս. Պատարաքը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, ուր քարոզեց Տ. Տիրայր Վրդ., նկարագրելով Աստուծոյ անսպառ սիրոյն պատկերը մարդուն համար, Անտակ Որդւոյն օրինակովը մշտնջենաւորութեամբ:

— Հայֆայի մէջ այսօր քարոզած էր Ս. Պատրիարքը, և իրիկունը նախագահած Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան 1500 ամեակի առթիւ սարքուած հանգէսին, ուր խօսած էին նաեւ, Բաքի Ն. Ամենապատուութիւնէն, Տ. Գարեգին Վրդ., իսկ Տ. Սիոն Վրդ. բանախօսած:

● Բշ. 25 Մարտ. — Տ. Մատթէոս Սրբազան, որ ձերբութեան ակարութեամբ քանի մը շարքի է լիւր անկողինէն էր ինկած, փոխադրուեցաւ քաղաքի գերմանական հիւանդանոցը:

● Դշ. 26 Մարտ. — Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ աւագ թարգման Տ. Հայրիկ Վրդ. և Գ. Կ. Նուբեանի, այցելեց եգիպտական հիւպատոսին, Ն. Վեհ. Փուստ Ա. թագաւորի ձննդանի տարեգործին առթիւ ի շնորհաւորութիւն:

● Դշ. 27 Մարտ. — Ս. Պատրիարք Հօր այցելեց Միլնադաբեան երաժշտութեան Բրօք. ի Պերլի՝ գերմանացի Տօքթ. Եօաննէս Վօլֆ:

— Ճաշու ժամերգութեան առթիւ Տ. Մկրտիչ Սրբազան Աղաւնունի քարոզեց կանանց դասուն. խօսեցաւ խոնարհութեան վրայ, զայն ներկայացնելով որպէս քրիստոնէական մեծագոյն առաքինութիւններէն մին:

● ԵՂ. 28 Մարտ. — Ս. Պատրիարք Հօր այցելեց Պարսկաստանի Նորընտիր Ֆրանսական դեսպան, Գ. Պօզլի, իր տիկնոջ հետ, որ Եգիպտոս — Պաղեստին — Սիւրիա ճամբով Կ'ուղարկէր Թէհրան:

— Երեկոյեան, «Եկեցեցէ» ժամանակ, Ս. Պատրիարքը քարոզեց. խօսեցաւ վշտաց մէջ համբուսութեան և աստուածային կամաց համակերպութեան մասին, բարոյական այդ երկու վիճակները ցուցնելով իրիւ երբեք միջոց անգոհուած հոգւոյ խաղաղացման: